



## ԿԵՂԾԻՔԸ ՉԻ ԿՊՉՈՒՄ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻՆ

1946 թ. ՀԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ պատմության ինստիտուտը 4000 տպաքանակով հրատարակեց Ն. Մ. Տոկարսկու «Архитектура древней Армении» գիրքը (պատասխանատու խմբագիր՝ Հ. Ա. Օրբելի): Վրաց պատմաբանների և արվեստագետների շրջանում գիրքն ընդունվեց խիստ անբարյացակամ և ենթարկվեց անողորմ քննադատության: Հաջորդ տարի լույս տեսավ Ս. Ջանաշիայի բրոշյուրը՝ «Об одном примере искажения исторической правды (по поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”): Ի՞նչ էր պատահել, ո՞րն էր գիտական մեծ արձուկի պատճառը: Պարզվում է, պատճառը Մեծ Հայքի 14-րդ նահանգն է՝ Տայքը: Վրաց ճարտարապետության պատմության հեղինակներն այն համարում են վրացական երկիր, իսկ հուշարձանները՝ վրացական: Ինչ փույթ, թե այդ նահանգը հարյուրամյակներով եղել է հայ Մամիկոնյան նախարարների տոհմական, պապենական ժառանգական կայվածքը, իսկ 8-րդ դարի վերջերից՝ հայ Բագրատունիների սեփականությունը: Նրանք էլ՝ այդ նախարարական տները, կառուցապատել են իրենց հայրենիքը, ստեղծելով այնպիսի կոթողներ, ինչպիսիք են՝ հանրահայտ Իշխան ու Բանակ տաճարները, Օշկվանքն ու Խախուվանքը, Պարխարն ու Չորղվանը, Էգրեկն ու Բազմաթիվ այլ շինություններ:

Տայքի հուշարձանները առաջինը անցած դարի կեսերին ուսումնասիրել է Ն. Սարգսյանը: Այնուհետև 1902, 1907, 1917 թվերին Ե. Թաղաշյվիլու ղեկավարած հնագիտական արշավախմբերը, որոնք, սկսելով Կարսից ու Կաղզվանից, մինչև Օլթի և Արդահան, մինչև Գասատանի սահմանները հանդիպած բոլոր հուշարձանները չափազրել, ուսանկարել, նկարագրել ու հրատարակել են իրենց հարմար մեկնաբանություններով՝ որպես վրաց արվեստի ստեղծագործություններ: Եվ որպեսզի երևույթն արտառոց չթվա, իրենց արարքն էլ համարվի բնական, քաղաքական «ճշգրտում» են մտքել, Ե. Թաղաշյվիլին սխալ էր համարում ռուսական կայսրության այն որոշումը, որով 1878 թ. Բեռլինյան դաշնագրով Ռուսաստանին անցած Օլթին ու Արդահանն իրենց շրջաններով միացվել էին Կարսի մարզին: Ըստ նրա, պետք էր Օլթին միացվեր Բաբունսի մարզին, Արդահանը՝ Թիֆլիսի նահանգին, քանի որ այլևայլ առումներից բացի, այդ շրջանները իբր, ազգագրական առումով ոչնչով կապված չեն Կարսի մյուս շրջաններին: Բայց ահա 1897 թ. մարդահամարով Կարսի մարզում, ինչպես նաև Օլթիում և Արդահանում ապրող բնակչության յուրաքանչյուր հազարից հայեր են եղել 253 մարդ, թուրքեր՝ 218, քրդեր՝ 146, հույներ՝ 112, կարաիմաֆախներ՝ 103, ռուսներ՝ 96, թուրքմեններ՝ 29: Բերված ցանկում վրացիներ չեն արձանագրվել, քանի որ կամ չեն եղել, կամ եղել են սակավաթիվ: Այս տվյալները քաղված են Ն. Յա. Մառի՝ 1922 թ. հրատարակած «Ардаган, Карс - исторический узел межнациональных отношений Кавказа» աշխատությունից:

1913 թ. հունվարի տվյալներով, Կարսի մարզում ապրում էր 333917 մարդ, որոնցից 85194-ը հայ, 68155-ը՝ թուրք, 52201-ը՝ քրդեր, 48610-ը՝ հույն, 43272-ը՝ կարաիմաֆա, 16557-ը՝ բուրքմեն, 16628-ը՝ ռուս, 3395-ը՝ այլ ազգեր (եվրոպացիներ, վրացիներ, ասորիներ, եգիպտացիներ և այլն): Բնիկները հայերն էին: Թուրքերը, քրդերը, ասորիները, եգիպտացիները եկել էին Թուրքիայի տարբեր գավառներից (տե՛ս ՀՄՀ, 5-րդ հատոր, էջ 346): Ավելի պերճախոս վկայություն է. Թաղաշյվիլու մեկնաբանությունների անհիմն լինելու վերաբերյալ չի կարող լինել:

Տոկարսկին իր գրքի մի գլուխը նվիրում է Տայքի 10-րդ դարի ճարտարապետական դպրոցին, այնտեղ շարադրելով իր տեսակե-

տը: Նա գտնում է, որ հուշարձանների ճարտարապետությունը չի կարելի որոշել, ելնելով նրանից, թե որ պետության սեփականությունն են: Իր ընդհանխտությունն համոզելու համար նա բերում է Խախու տաճարի օրինակը. «Խախույ, Օշկ և Իշխան տաճարների համեմատությունից ակնհայտ է դառնում ներքին պատերի հարթությունների հարդարման տարբերությունը... Խախույում պատերի քարասալերի մշակումը սրբատաշ է. անկախ նրանից, որ նրանց վրա նկատվում են սվադի ու որմնակարի հետքեր: Պարզ է, որ դրանք ավելի ուշ ժամանակի հետքեր են, և որ, սկզբնապես, նախատեսված չի եղել եկեղեցին ներսից սվադել: Օշկում և Իշխանում ներքին պատերից սրբատաշ են միայն մույթերը, որմնամույթերը և կամարները, մնացյալը իրականացվել է այն հաշվով, որ անմիջապես սվադվելու է ու նկարագրողվելու: Հարց է ծագում. արդյո՞ք Խախույի տաճարն է սկզբանե չի կառուցվել հայ հակաքաղկեդոնականների համար, որոնք չէին ընդունում պատկերաքանդակն ու որմնակարը»:

Այնուհետև Ն. Տոկարսկին գրում է. «Տայքի 10-րդ դարի երկրորդ կեսի ճարտարապետական դպրոցը ստեղծվել է այն պայմաններում, երբ հայկական բնակչության մի մեծ հատված վերոհիշյալ պատճառներով (կապված քաղկեդոնականության հետ - Տ. Ս.) վերջնականապես առանձնացավ, ստեղծելով մի ինքնուրույն պետական կազմավորում»:

Հայ պատմիչ Ասողիկի հավաստի վկայությամբ, Տայքի ինքնուրույն իշխանության տեղը՝ Մեծ կյուրապաղատ Դավիթը, իր հեզուքյամբ և խելացիությամբ հարգվում էր ոչ միայն հարևան երկրների թագավորների, այլև բյուզանդական Վասիլ կայսեր կողմից: Տեղին ենք համարում իշեցնել հայ համբավվոր գիտնական Ներսես Ալկիմյանի՝ 1958 թ. հայտնաբերած և հրատարակած 10-րդ դարի վերջին տասնամյակի մի վավերագրի մասին: Պարզվում է, որ Դավիթ Մեծ կյուրապաղատը պատվիրել է արաբերենից հայերեն թարգմանել «Պղնձե քաղաքի» պատմությունը՝ ի գլխավորում թագավորների և իշխանների: Այդ ժամանակ Տայքի ոչ միայն բնակչությունն էր հայ, այլև թագավորն ու իր պալատականները, իշխանները:

Ն. Տոկարսկու բացատրությամբ, կյուրապաղատ Դավիթը, հայ բնակչության մի մասի քաղկեդոնական լինելու պատճառով, իր տիրույթը՝ հայկական Տայքը, չէր միավորում հայ Բագրատունիների թագավորությանը, միաժամանակ չէր միավորում վրացական պետությանը, զգալով, որ հայերի վրացացման-ազգափոխության վտանգն իրական էր, և կարող էր այդ երևույթն արագանալ: Նա իր գրքի «Տայքի 10-րդ դարի ճարտարապետական դպրոցը» բաժինն ավարտում է, գրելով. «10-11-րդ դարերի սահմանագծի ճարտարապետական ձևերի զարգացումն Անդրկովկասում ճիշտ հասկանալու համար պետք է սիրով, առանց կանխակալության հետանուտ լինել այն բոլոր թանկագին թելերին, որոնցով միախույսվել է ճորտիս ավագանի, Ն. Յա. Մառի խոսքերով ասած, «կովկասյան ընդհանուր շահերի չհանգուցալուծված կծիկը»: Որպեսզի Ն. Տոկարսկու կարծիքը լայն տարածում չստանա և մեկընդմիջտ Տայքի վերաբերյալ քննարկումները բացառվեն, ակադ. Ս. Ջանաշիան, իր բրոշյուրը շարադրելիս, տալիս է նրան ավելի քաղաքական գունավորում, քան ճարտարապետական դիտարկման բնույթ. «Հեղինակի արատավոր մեթոդոլոգիան, միտումնավորությունը, շարադրելու փնթի ոճը, որդապատճառը, որ ընդհանուր ոչինչ չունի գիտության հետազոտական բնույթի հետ» ահա թե ինչն է զարմացնում այս գրքում, գիրք, որ պատահականորեն կրում է գիտական բարձր հիմնարկի մակնիշ: Այնուհետև ասում է. «Գրքի «մեխը» փորձ է ամբողջ հա-

րավային Կրատանը իր բնակչությանը և մշակույթով ներկայացնել հերև այլ ազգային աշխարհ... Հանրահայտ փաստերի նկատմամբ գործադրվող բռնությունը, դրանք հրեշավոր, աղավաղված տեսքով ներկայացնելը Տոկարսկուն պետք է եղել ոչ թե գիտական, այլ ուրիշ նպատակի համար: ...Մինչև հիմա ընդունվում էր, որ Տաօ-Կլարքեթի ճարտարապետությունը հանդիսանում է վրաց ճարտարապետության օրգանական մասը: Տոկարսկին ձգտում է դեմ նետել գիտության մեջ անրացած այդ պատկերացումը:

Չանաշխան իր բրոշյուրի 32-րդ էջում գրում է. «Տոկարսկին աստիճանաբար ձեռք բերելով որոշ քաջություն, արմատից կտրում է իր իսկ կողմից մոզոման Տաօ-Կլարքեթի ճարտարապետության ինքնուրույնությունը՝ գործը վստահելով ապագայի կեղծ գիտության սպասավորներին, որոնց արտագրելով Տոկարսկուն, պետք է ինչ-որ բաներ ավելացնեն անձամբ իրենց կողմից»:

Հայտնի է, որ Գ. Օրբելուն մեծ քանքերի գնով հաջողվեց Տոկարսկուն Հայաստանից բառիս բուն իմաստով փախցնել՝ հետք կորցնելու համար: Որոշ ժամանակ անց, Օրբելուն նույնպես ազատեցին էրմիտաժի բազմամյա տնօրենի պաշտոնից, հաշվի չառնելով նրա անգնահատելի դերը պատերազմի տարիներին այդ հանրահռչակ թանգարանի մեծ հարստությունը ոչնչացումից փրկելու շնորհակալ գործուն:

Ս. Չանաշխան մեկ անգամ ես նշում է. «Խորհրդային բարձր սկզբունքայնությամբ օժտված գիտության պատմության մեջ, ճշմարտության նենգափոխման աննախընթաց դեպք է - մի փորձ՝ մեկ ազգային մշակույթի հուշարձանները ներկայացնել որպես մեկ այլ ազգային մշակույթի հուշարձաններ»:

Հավանություն տալով Չանաշխայի բուրդ դրույթներին, Վ. Բերիձեն իր աշխատություններից մեկում ավելացնում է. «Հայկական ճարտարապետության ոչ մի յուրք հետազոտող, իհարկե, նույնպես հնարավոր չհամարեց համաձայնել դրանց հետ, և այդ պատճառով ես Տոկարսկու գիրքը չհիշատակեցի գրականության վերլուծության ընթացքում»: Այս առիթով հարկ է նշել, որ ոչ միայն հայ «լուրջ հետազոտողները», այլև ճարտարապետական ողջ հասարակայնությունը, ճիշտ գնահատելով Ս. Չանաշխայի և Վ. Բերիձեի վտանգավոր, եթե չասենք ահաբեկող ելույթները, խելամիտ համարեցին առժամանակ լռել:

Հայ ճարտարապետության պատմության յուրք հետազոտողներից էր նաև այն ժամանակ ճարտարապետության թեկնածու (այժմ՝ ՀՀ ԳԱԱ անդամ) Վ. Ս. Հարությունյանը, որը դժբախտություն ունեցավ կամա թե ակամա ներքաշվել Ս. Չանաշխայի ստեղծած խառնաշփոթին՝ մանուկում թողնելով մի տխուր պատմություն՝ հողվածի ձևով («Սովետական Հայաստան», 1948 թ., թիվ 84), և երկրորդը գրախոսության ձևով (Հայկական ՍՍՌ ԳԱ հաս. գիտ. Տեղեկագիր, 1948 թ., թիվ 2): Այդ գրախոսության մեջ ճարտարապետությանը վերաբերող մասի հեղինակ Վ. Հարությունյանը, մասնավորապես գրում է. «Սակայն բուրժուա-նացիոնալիստական հայագիտությունը և եվրոպական բուրժուական գիտությունը ձեռք-ձեռքի տված, հայ ճարտարապետության պատմության համար էլ խտրորնակի ծանապարհ էին պատրաստում: ...Եղան գիտնականներ, որոնք հակված էին հայկական ճարտարապետությունը դիտել, որպես «քրիստոնյա կուլեկտիվի ինքնուրույն ստեղծագործություն»: Փաստագրելով Տոկարսկու գրքի որոշ թերի կողմեր, գրախոսը, չգիտես ինչու, մեկ է քաշում նաև Ի. Ատրժիգովսկուն և նրա գործը, թերևս Չանաշխային այդ հարցում լրացնելու համար: Ես գրում է. «Պատահական չէ, որ առաջին իմպերիալիստական պատերազմի և գերմանա-ավստրիական ագրեսիայի մուլուցքի տարիներին պատրաստվեց և 1918 թ. Վիեննայում լույս տեսավ լեհական ռենեզանտ և գերմանական բուրժուական արվեստագիտության կարկառուն ներկայացուցիչ Յոզեֆ Ատրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և եվրոպան» երկհատոր աշխատությունը, որին վերապահված էր ոչ այնքան դրական, որքան բացասական դեր խաղալ»: Ապա շարունակում է. «Ատրժիգովսկին, հայկական կուլտուրան կտրելով Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրաներից և անտեսելով վրաց ճարտարապետությունը, հայկական շինարարական արվեստը հայտարարեց որպես եվակետ եվրոպայի մի շարք երկրների ճարտարապետական մի քանի ոճերի առաջացման համար: Դրանով Ատրժիգովսկին ուժեղ կերպով զրգռեց հայ բուր-

ժուա-նացիոնալիստորեն տրամադրված ինտելիգենցիայի ազգային ինքնասիրությունը՝ հայկական շրջաններում ստեղծելով ազգային սնապարծության և ասիմանափակվածության մի այնպիսի մթնոլորտ, որի առանձին դրսևորումները դեռևս իրենց զգացնել են տալիս»: Վ. Հարությունյանը Ատրժիգովսկուն ուղղված խոսքը ավարտելով կրկին անդրադառնում է Ն. Տոկարսկուն: «Միա այս տեսակետից միանգամայն դատապարտելի են Տոկարսկու գրքում տեղ գտած նացիոնալիստական տեսնեցնեցները և նրանց առաջացրած նացիոնալիստական կարգի վնասակար գրգիռները»:

Վ. Հարությունյանը Ն. Տոկարսկուց մեջբերում է անում. «Իր հայ երբայրներից ես չի մնացել նաև ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը, տալով տուրք 530-ական թվականների մոդային և իր ստեղծագործության գմբեթը պսակելով տիպիկ հայկական քիվով», և ապա շարունակում է. «Տոկարսկին վկայակոչում է նաև Կրաստանում Աթենի տաճարի կառուցման փաստը հայ ճարտարապետի կողմից և փոխարին այդ փաստը դիտելու որպես երկու բարեկամ ժողովուրդների սերտ կապերի հետևանք, համարում է հայկական միակողմանի ազդեցության արդյունք»: «Տոկարսկին... չի հաղթահարել հայկական ազգային ավանդական պատմագրությունը և տուրք է տվել բուրժուական նացիոնալիզմին... Միանգամայն արատավոր է Տոկարսկու գրքը՝ «Տայքի ճարտարապետական դպրոցը 10-րդ դարում» խորագիրը կրող գլուխը: Նախ պետք է ստել, որ հայ ճարտարապետությանը վերաբերող գրքում այս գլուխը անարդարացի և տեսնողեցից կերպով է տեղ գտել, որովհետև 10-րդ դարում Տայքի ճարտարապետությունը հայկական չէր, կամ ինչ-որ ինքնուրույն դպրոց չէր ներկայացնում, ինչպես պնդում է Տոկարսկին ( էջ 202), այլ այդ դարում Տայքում և Կղարքեթում (Տաօ-Կլարքեթ) կարող է խոսք լինել միայն վրացական ճարտարապետական դպրոցի և վրացական ճարտարապետության մասին: Իշխանի, Օշքի, Տբեթի, Խախուլի ճարտարապետական հուշարձանները վրացական ճարտարապետությանն են պատկանում: Իգոր է Տոկարսկին հարց առաջադրում, թե արդյոք Խախուլի տաճարը, օրինակ, քաղկեդոնիկ՝ հայերի համար չի՞ կառուցված: Այն հանգամանքը, որ քաղկեդոնիկ հայերը կարող էին օգտվել այդ տաճարներից, չի կարող նրանց վրացական լինելը վեճի առարկա դարձնել» (էջ 81):

Չետազայում՝ տասնյակ տարիներ անց, երբ շատ բանով էր փոխվել երկրի քաղաքական կացությունը, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը 1991 թ. օգոստոսի 20-ին «Երեկոյան Երևան» թերթում ընդարձակ հոդված տպագրեց Ի. Ատրժիգովսկու մահվան 50-ամյակի կապակցությամբ «Հիշատակը նրա օրինյալ եղիցի» խորագրով: Որպես նախաբան ասված է. «Դարասկզբին հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը հետազոտող օտարազգի գիտնականների շարքում Յոզեֆ Ատրժիգովսկին (1862-1941) գրավում է առաջնակարգ տեղ: «Հայերի ճարտարապետությունը և եվրոպան» իր երկհատոր հիմնարար մենագրությամբ (Վիեննա, 1918 թ.) նա խիզախեց սոր արժեքափերով գնահատել հայ ժողովրդի բազմադարյան, հատկապես քրիստոնեական ճարտարապետությունը, վերհանել դրա տեղը ու նշանակությունը քրիստոնեական ճարտարապետության ընդհանուր գանձարանում»: Եվս երկու տարի անց, ճարտարապետության դոկտոր Վ. Ս. Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» 1993 թ. թիվ 1-2-ում ընդարձակ հոդված է տպագրում Ն. Տոկարսկու ծննդյան 100-ամյակի առթիվ «Հայկական ճարտարապետության հետազոտման մեծ երախտավորը» վերնագրով: Հեղինակը հողվածը սկսում է այսպես. «Մեծ ու բեղմնավոր կյանքով է ապրել Լիկոլայ որդի Սիբայի Տոկարսկին՝ ռուս մարդը, հեռավոր Լեայի ափին գտնվող Ամսկո Պետերբուրգ քաղաքից: Հայկական ճարտարապետության հետազոտման գործում ունեցած ծանրակշիռ ներդրմամբ նա բարի հիշատակ թողեց իր մասին»: Հանդեսի 183-րդ էջում Վ. Հարությունյանը չի մոռացել ստել. «Շարադրած գրախոսականում կան արդարացի դիտողություններ: Սակայն, ցավոք, գրախոսության հեղինակներս, տուրք տալով ժամանակի թե՛ իրադրությանը (նկատի ունենք վրաց ակադեմիկոս Ս. Չանաշխայի աչառու ելույթը Տոկարսկու մենագրությանը՝ «Տայքի 10-րդ դարի ճարտարապետական դպրոցը» բաժնի վերաբերյալ) ու այդ կապակցությամբ ենթարկվելով «վե-

\* Տոկարսկու գրքում գրված է «Խալաքաղկեդոնական»:

րիններ»՝ ճնշանը, գրախոսության մեջ տեղ տվեցինք և. Տոկարսկու հասցեին նաև անհիմն մեղադրանքներ: Այս առիթով դա պիտի խոստովանենք»:

Նույն հանդեսի 187-րդ էջում Հարությունյանը, անդրադառնալով Տայքին, գրում է. «Շշմարիտն այն է. որ ոչ վրացի գիտնականները պիտի պնդեն, թե այդ տարածաշրջանի ողջ մշակույթն ու ճարտարապետությունը միայն ու միայն վրացական է, ոչ էլ մենք, հայ ճարտարապետության պատմաբաններս պիտի հակառակը պնդենք: Գիտական ճիշտ մոտեցումը հրամայաբար պահանջում է դրանք դիտել փոխազդեցության ոլորտում, այդ դիրքերից էլ, հիմնվելով պատմական ճշգրիտ տվյալների վրա՝ տարանջատել վրացական ու հայկականը»:

Վ. Հարությունյանը և Տոկարսկու «Հայ հին ճարտարապետությունը» գրքի մասին գրել է՝ գերծ չի թերություններից: Ի. Ստրժիգովսկու երկհատոր գրքի մասին հողվածում հավաստում է. «Այնուամենայնիվ չի ներկայացնում հայ ճարտարապետության ամբողջական պատկերը, նրա զարգացման բոլոր փուլերի ամփոփիչ պատմությունը»: Նույնպիսի արտահայտություններով է զննահատում մինչև վերջերս հրատարակված նաև մի քանի այլ ընդհանրապես աշխատություններ. «Դրանք դեռևս չի կարելի կատարյալ համարել»: Պարզվում է, որ ինքը՝ վերոհիշյալ տողերի հեղինակը, 1992 թ. հրատարակած իր «Հայկական ճարտարապետության պատմություն» մեծածավալ աշխատությունը (540 էջ տեքստ և 88 գուճավոր լուսանկար) ևս ամբողջական չի համարում և «Հեղինակի կողմից» էջերում գրում է. «Անհրաժեշտ տվյալների պակասության պատճառով ձեռնարկում առայժմ ընդհանրացված և զննահատված չէ հայ ճարտարապետության անքակտելի մասը կազմող հայկական գաղթավայրերի ճարտարապետության ուշագրավ և հարուստ պատմությունը...»:

Վ. Հարությունյանի վերջին աշխատության ոչ ամբողջական լինելուն համաձայնելով հանդերձ գտնում ենք, որ հեղինակի հիշյալ խոստովանությունը մի ավելի մեծ բացթողում աննկատ դարձնելուն ուղղված փորձ է թերևս: Այդ այն է, որ մեր օրերում, հայ ճարտարապետության պատմաբան Վ. Հարությունյանը, Պատմական Հայաստանի մի ամբողջ մասանգ՝ Տայքի, այսինքն՝ հորդալույն Հայքի ճարտարապետության պատմությունը գիտակցաբար դուրս է թողել իր հեղինակած ոչ միայն վերջին, այլ նաև նախորդ բոլոր՝ հայերեն և ռուսերեն ընդհանրական գրքերից:

Նախորդ էջերում մենք տեսանք, թե ինչ անողորմությամբ էր նա դատափետում ռուս պատմաբան և Տոկարսկու Տայքի մասանգի հայ ճարտարապետության հուշարձանների արվեստը յուրովի դիտարկելու համար: Նույնպես և աշխարհահռչակ արվեստագետ Յոզեֆ Ստրժիգովսկուն, առանց բավարար փաստերի, հինչպես էր կապում գերմանական նացիոնալ-սոցիալիստների հետ, իսկ հետագայում իր վերաբերմունքը բացատրում ժամանակի քաղաքական իրադրությամբ:

Հասկանալի է, ծանր ու վայրիվերո ժամանակներ էին, բայց ամեն դեպքում գիտնականը պետք է իր կամքին հակառակ խոսքն ասելիս չափը չկորցնի, հնարավորության սահմաններում խուսափի ուղղակի կեղծիքից ու անհիմն մեղադրանքներից, մանավանդ, երբ այն դառնում է հավաստի վտանգ՝ հոյ գավալի հետևանքներով:

Այժմ կարևորն այլ հարց է, թե ինչու՞ հետազոտողը, հաջորդ 45-ամյա նպատակավոր ժամանակամիջոցում, երբ դրա համար ուներ բոլոր հնարավոր միջոցները, չփորձեց շուկել թույլ տված սխալները, հանգամանորեն չմեկնաբանեց իր հայացքները, բավարարվեց լոկ հայտարարությամբ՝ որ իրոք սխալներ թույլ տվել է և ոչ ավելին:

Իհարկե, կան սխալներ, որոնք ճակատագրական չեն և որևէ վատ հետևանք չեն ունենում, այդպիսի դեպքերում կարելի է բավարարվել նաև ինքնախոստովանությամբ: Վ. Հարությունյանի՝ 1940-ական թվականների վերջին արտահայտածը մի ամբողջ տեսություն է, ասված մեծ համոզվածությամբ և որոշակի հավաստումներով, մի բան, որ չափազանց դժվարացրել է հետագա հետազոտողների նորանոր դիտարկումները, նպատակագրել այդպիսիք և լայն հնարավորություն ընձեռել հարցի միակողմանի ու անարդար լուծման համար:

Անցած տասնամյակների ընթացքում վրաց արվեստագետների տարբեր լեզուներով հրատարակած բոլոր գրքերում Տայքի բոլոր

հուշարձանները մեկնաբանվում են որպես վրացական կորոզներ: Օտարագոյ գիտնականների բոլոր աշխատություններում դրանք համարվում են վրացական: Այս իրավիճակը, թվում է, բնական, արտաբուստ նաև տրամաբանական, քանի որ հայ ճարտարապետության պատմության գրքերում ևս, այդ թվում և Վ. Հարությունյանի ամենավերջին գրքում, այդ մասին ոչինչ չկա: Նույնիսկ չի հիշատակվում, թե կան հեղինակներ և հրատարակված մեծագրություններ, որոնցում տվյալ հարցի վերաբերյալ տրամազօրեն հակառակ կարծիք է հիմնավորվում: Դրանցում ոչ թե լոկ հայտարարություններ են, այլ կոնկրետ փաստերի, պատմական և գեղարվեստական վերլուծությունների հիման վրա արված եզրակացություններ: Նման պահվածքը մեզ բերում է այն համոզման, որ և Տոկարսկու «հասցեին մեղադրանքներ» ներկայացնելու խոստովանություն-հայտարարությունը Վ. Հարությունյանին ծառայել է իրեն «զլխացավանքից» ազատ պահելու համար, և ոչ ավելին: Իրականում պարոն Հարությունյանն, ըստ էության, մնացել է իր նախկին կարծիքին, որ Տայքում և Կղարքում (Տաօ-Կլարքեթ) կարող է խոսք լինել միայն վրացական ճարտարապետական դպրոցի և վրացական ճարտարապետության մասին, որ 10-րդ դարում Տայքի ճարտարապետությունը հայկական չէր:

Իհարկե, բնավ պարտադիր չէ, որ Վ. Հարությունյանը վերանայի իր համոզմունքները, սակայն գոնե հայ ճարտարապետության ընդհանուր պատմության գրքում առկա իրավիճակը պետք է պարզորոշ ներկայացված լիներ: Մի բան, որ չի արվել:

Մեր ճարտարապետության պատմաբանի այս վերաբերմունքն է թերևս նպաստել, որ վերջերս Վրաստանի համալսարանը նրան շնորհեց պատվավոր պրոֆեսորի կոչում: Կոլեգաների փոխադարձ բարեկամությունն իհարկե խրախուսելի է, պայմանով, որ այն չլինի ի վնաս ճշմարիտ գիտության և ազգային արվեստի:

Ստրժիգովսկու մահվան 50-ամյակին մկրիված վերոհիշյալ հողվածում Վ. Հարությունյանը ներկայացնում է գիտնականի «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատության ռուսերեն թարգմանաբար հրատարակելու ռիսկականը և այդ գործում իր ունեցած ծառայությունը: Այստեղ նա գրում է, թե Պ. Գ. Ամբուրգերի «տրեմաջ» աշխատանքով թարգմանությունն ավարտվեց 1945 թվին: Թվում էր, թե կարելի էր ձեռնարկել հրատարակման գործը: Բայց բավական էր, որ մի հեղինակավոր գիտնական հայտնեց, թե Ստրժիգովսկին իր կյանքի վերջում հարել է նացիոնալ-սոցիալիզմին, որպեսզի հրատարակումը ծրագրից հանվեր»: Հետաքրքիր է, թե ու՞մ է ակնարկում պարոն Հարությունյանը... «հեղինակավոր գիտնական» արտահայտությամբ, որքան մեզ այտնել է, իրենից բացի մեզանում ոչ ոք բացասաբար չի արտահայտվել գրքի հեղինակի հասցեին: Հարությունյանն այստեղ տեղեկացնում է. «Երկու տարի առաջ գրքի առաջին հատորի առաջին մասը տողերիս հեղինակի ընդարձակ առաջաբանով ու մեկնաբանություններով հանձնվեց «Հայաստան» հրատարակչությանը... այնուհետև «Անահիտ» հրատարակչությանը... հրատարակելու համար»:

Մեր կարծիքով, Ստրժիգովսկու՝ հայ ճարտարապետությանը մկրիված երկու հատորները ռուսերեն թարգմանաբար պետք է հրատարակվեին առանց որևէ քան ավելացնելու կամ պակասեցնելու: Այդ գործը նորից չխաթարելու մտահոգությամբ պետք է անպայման հրաժարվել նաև այն «առաջաբանից ու մեկնաբանություններից», որ գործին կցել է Վ. Հարությունյանը:

**ՏԻՐԱՆ ՄԱՐԻՌՅԱՆ**

**Ճարտարապետության դոկտոր**

**ՀՀ վաստակավոր շինարար-ճարտարապետ**

\* Ն. Ս. Տոկարսկու «Հին Հայաստանի ճարտարապետությունը» գիրքը, տպագրվելուց 15 տարի անց՝ 1961 թ. վերահրատարակվեց «4-14-րդ դդ. Հայաստանի ճարտարապետությունը» խորագրով: Որոշակի վերածախկու միջ բացի, հեղինակն ու խմբագիրը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Սիբայել Սազանյանը, հարմար էին համարել գրքից բաց թողնել մեծ աղմուկի առիթ դարձած «Տայքի ճարտարապետության 10-րդ դարի դպրոցը» գլուխը: Տարիներ անց, զրջալով, Սիբայել Սազանյանը հանդես եկավ տողերիս հեղինակի «Տայքի ճարտարապետության հուշարձանները» (1972) և ապա սրա վերահրատարակության «Տարագույն Հայք» (1978), մեծագրությունների խմբագրի դերում, իսկ 1988 թ. հետմահու հրատարակվեց Ն. Ս. Տոկարսկու «Из истории средневекового строительства в Таи́ском княжестве» գիրքը: